# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 07/20

ք. Գյումրի «14» փետրվարի 2020 թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Աևարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի գինը կազմում է 1 275 360 /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու պատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 3. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ3

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):
5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:
8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Գյումրու թիվ 4 արհեստագործական | «Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ |

| | |
|---|---|
| պետական ուսումնարան» ՊՈԱԿ | |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | ք. Գյումրի Կիրովի 1 |
| ՀՎՀՀ 05536355 | ՀՎՀՀ 05524666 |
| Հ/Հ 9002180005872950 | Հ/Հ 2472600004240000 |
| Գյումրիի գանձապետական բաժանմունք | «Արդշինբանկ» ԲԲԸ Գյումրու մ/6 |
| ______________ | ______________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Տնօրեն Ք. Աւհարոնյան | Տնօրեն Հ.Խաչատրյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N
« 14» փետրվարի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 07/20 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

| համարը | միջանցիկված կագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակն ըստ ամիսների | | | | | | | | | | |
| | | | | | | | | | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Գործիքներ , փականներ , բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 44511260 | Հղկաթուղթ №200 /ոսկերչի/ | Հղկաթուղթ № 200, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար | թերթ | 300 | 9000 | 30 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 6 | | | 12 | | | | | 12 | | |
| 2 | 44511260 | Հղկաթուղթ №600 /ոսկերչի/ | Հղկաթուղթ № 600, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար | թերթ | 300 | 18000 | 60 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 10 | | 25 | | | | | | | 25 | |
| 3 | 44511260 | Հղկաթուղթ №800 /ոսկերչի/ | Հղկաթուղթ № 800, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար | թերթ | 300 | 18000 | 60 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 10 | 25 | | | | | | | 25 | | |
| 4 | 44511260 | Հղկաթուղթ №1000 /ոսկերչի/ | Հղկաթուղթ № 1000, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար | թերթ | 300 | 12000 | 40 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 7 | | 18 | | | | | | | 15 | |
| 5 | 44511343 | Գայլիկոն 0.6 մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 0.6մմ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 3 | | | 7 | | | | 5 | | | |
| 6 | 44511343 | Գայլիկոն 0.8 մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 0.8 մմ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի ք. 11փ 5/2 | 3 | | 8 | | | | | | 4 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 44511343 | Գայլիկոն 0.9մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 0.9 մմ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | 6 | | | |
| 8 | 44511343 | Գայլիկոն 1.0 մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 1.0 մմ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 6 | | | | | | 6 | | |
| 9 | 44511343 | Գայլիկոն 1.2 մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 1.2 մմ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | 6 | | | |
| 10 | 44511400 | Բոռչիկ կլոր Փ-1,5մմ | Բոռչիկ կլոր Փ-1,5մմ | հատ | 500 | 7500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 6 | | | | | | 6 | | |
| 11 | 44511400 | Բոռչիկ կլոր Փ-1,75մմ | Բոռչիկ կլոր Փ-1,75մմ | հատ | 500 | 7500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | | | 6 | |
| 12 | 44511400 | Բոռչիկ կլոր Փ-2մմ | Բոռչիկ կլոր Փ-2մմ | հատ | 500 | 7500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 5 | | | | | | 4 | | |
| 13 | 44511400 | Բոռչիկ ուղիղ 0,6մմ | Բոռչիկ ուղիղ 0,6մմ | հատ | 600 | 9000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | | | 6 | |
| 14 | 44511400 | Բոռչիկ ուղիղ 0,8մմ | Բոռչիկ ուղիղ 0,8մմ | հատ | 600 | 9000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 5 | | | | | 4 | | | |
| 15 | 44511400 | Բոռչիկ ուղիղ 1,0մմ | Բոռչիկ ուղիղ 1,0մմ | հատ | 600 | 9000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | | 6 | | |
| 16 | 44511400 | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 1,5մմ | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 1,5մմ | հատ | 700 | 10500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 6 | | | | | | | 6 | |
| 17 | 44511400 | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 2,0մմ | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 2,0մմ | հատ | 800 | 12000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 6 | | | | | | 6 | |
| 18 | 44511400 | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 3,0մմ | Բոռչիկ անծրևանոց պրոֆիլով 3,0մմ | հատ | 1000 | 15000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 5 | | | | | 4 | | | |
| 19 | 44511400 | Սղոցիկ BOSH T101 AO | Նրբասղոցի մետաղական փոփոխվող սայրեր BOSH T101 AO | հատ | 420 | 5880 | 14 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 4 | | | | | | | 7 | | |
| 20 | 44511400 | Սղոցիկ BOSH T101 BO | Նրբասղոցի մետաղական փոփոխվող սայրեր BOSH T101 BO | հատ | 420 | 3360 | 8 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 2 | | | | | | 4 | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 44511320 | Քերան ոսկերչական /ղալամ/ №3 | Գործիքային պողպատից պատրաստված գործիք/ղալամ/ №3, աշխատանքային երկարությունը 80մմ, հաստությունը՝ 0,3 մմ | հատ | 2000 | 30000 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 6 | | | | | 6 | |
| 22 | 44511320 | Նրբաղոց /ոսկերչի 12հատ/ № 4.0 | Նրբաղոց /ոսկերչի 12հատ/ № 4.0: Նախատեսված է նուրբ սղոցման գործողություններ կատարելու համար | հատ | 1200 | 96000 | 80 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 30 | | | | 20 | | 20 | |
| 23 | 44511320 | Նրբաղոց ոսկերչի № /12 հատ/ № 5.0 | Նրբաղոց /ոսկերչի 12հատ/ № : Նախատեսված է նուրբ սղոցման գործողություններ կատարելու համար | կապ | 1200 | 36000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 7 | | 13 | | | | 10 | | |
| 24 | 44511220 | Հալքանոթ Փ-55մմ | Թրծված բարձր ջերմակայունությամբ կավից տարա մետաղը հալեցնելու համար Փ-55մմ, բարձրությունը՝ 22մմ | կապ | 400 | 24000 | 60 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 30 | | | | 20 | | | |
| 25 | 44511220 | Հալքանոթ /արծաթի/ №3 | Թրծված կավից /սպիտակ/ աման մետաղը հալեցնելու համար Փ-55մմ, բարձրությունը՝ 22 մմ: N3 | հատ | 250 | 7500 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 15 | | | 12 | | | |
| 26 | 44511100 | Զոդման տիտանե ձող | Տիտանե ձող երկարությունը՝200մմ, տրամագիծը՝ 2մմ: Օգտագործվում է մանրակների զոդման և հալման ժամանակ | հատ | 400 | 8000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 10 | | | | | 7 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 27 | 44511400 | Նրբախարտոց ոսկերչական /6հատ/ | Նրբախարտոցները օգտագործվում են խարտման աշխատանքների ժամանակ, տարբեր պրոֆիլների /կլոր, կիսակլոր, քառակուսի, եռանկյուն, տափակ, օվալ/ /№-0-3/ | հատ | 3500 | 31500 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 4 | | | | | | 3 | | |
| 28 | 44511400 | Խարտոց մեծ /կիսակլոր, քառակուսի, եռանկյունի, ուղղանկյուն, կլոր 25սմ երկ./ | Խարտոց մեծ / կիսակլոր, քառակուսի, եռանկյունի, ուղղանկյուն, կլոր 25մմ երկ./ | հատ | 4000 | 16000 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 3 | | | | | | | |
| 29 | 44511270 | Մուրճ փայտե /ոսկերչական | Մուրճ տեկստալիտե, շրջանաձև հատումով, 40X65մմ, բռնիչի երկար. 250մմ, քաշը 150գր | հատ | 2000 | 10000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 2 | | | | | 2 | | | |
| 30 | 44511220 | Բռնիչ /3 ձեռք/ | Բռնիչ մետաղական, հոդակապային տակդիրով, Փ 76մմ, բարձր. 90մմ: Ունելին հեշտությամբ անջատվում է պտուտակով | հատ | 9000 | 27000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 | | | | | | 1 | |
| 31 | 44511220 | Հրակայուն աղյուսե սկավառակ | Ծրծած կավ աղյուսի խառնուրդով, նախատեսված է ոսկերչական աշխատանքների համար որպես տակդիր Փ 14սմ | հատ | 2500 | 20000 | 8 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 3 | | | | | 3 | | | |
| 32 | 44511220 | Հարթաշուրթ /ոսկերչական/ | Ռետինե բռնակով, պողպատյա գործիք երկ. 133մմ, աշխատանքային մասը 20մմ | հատ | 1500 | 7500 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 | | | | | | | |
| 33 | 44511220 | Կլորաշուրթ /ոսկերչական/ | Ռետինե բռնակով, պողպատյա գործիք երկ. 133մմ, աշխատանքային մասը 25մմ | հատ | 1500 | 12000 | 8 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 2 | | | | | 3 | | | |
| 34 | 44511220 | Կեռ հարթաշուրթ /ոսկերչական/ | Ռետինե բռնակով, պողպատյա գործիք երկ. 120մմ, աշխատանքային մասը 20մմ | հատ | 4000 | 24000 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | 2 | | | | | 2 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | 44511220 | Հարթաշուրթ /բաղակտուց ունկերչական/ | Ռետինե բռնակով, պողպատյա գործիք երկ. 120մմ, աշխատանքային մասը 20մմ | հատ | 2500 | 20000 | 8 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 3 | | | | | | | 3 | |
| 36 | 44511220 | Կծաքցան /ոսկերչական/ փոքր | Կծաքցան ոսկերչական: պատրաստված բարձրորակ պողպատից: Մինչև 4մմ տրամագծով փափուկ մետաղների կտրման ունակություն: երկարությունը 140մմ: Մակերեսը հղկված, քրոմապատ | հատ | 1500 | 13500 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 3 | | | | | 3 | | | |
| 37 | 44511220 | Կծաքցան | Կծաքցան ոսկերչական: պատրաստված բարձրորակ պողպատից: Մինչև 4մմ տրամագծով փափուկ մետաղների կտրման ունակություն: երկարությունը 140մմ: Մակերեսը հղկված, քրոմապատ | հատ | 2000 | 18000 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 3 | | | | | 3 | | |
| 38 | 44511240 | Աքցան /ոսկերչական բռնող / | Ռետինե բռնակով, պողպատյա գործիք երկ. 120մմ, աշխատանքային մասը 20մմ /зажим/ | հատ | 4000 | 24000 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 2 | | | | | 2 | | | |
| 39 | 44511400 | Նրբախարտոց ալմաստային /6հատ տարբեր պրոֆիլի/ | Նրբախարտոց ալմաստային /6հատ տարբեր պրոֆիլի՝ կլոր, կիսակլոր, քառակուսի, եռանկյուն, տափակ, օվալ/ | հատ | 3500 | 31500 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 4 | | | | | 3 | | | |
| 40 | 44511220 | Բռնիչ /ունելի/ | Երկարություն - 135 մմ, լայնություն - 16 մմ, բացվածք – 10մմ | հատ | 4000 | 24000 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | 2 | | | | 2 | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | 44511400 | Նրբախարտոցներ /6հատ/ փայտի | Նրբախարտոցները օգտգործվում են խարտման աշխատանքների ժամանակ, տարբեր պրոֆիլների փայտի մշակման համար /N-0-3/ | հատ | 4000 | 24000 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 2 | | | | | 2 | | | |
| 42 | 44511270 | Մուրճ երկաթյա /ոսկերչական փոքր | Մուրճ փոքր, հարվածային գործողության մեքենա՝ մետաղական նախապատրաստուկը պլաստիկ դեֆորմացիայի ենթարկելու համար: Կիրառվում է դարբնոցադրոշմիչ արտադրության մեջ կռման (կռող մուրճ) և ծավալային կամ թերթային դրոշմման (դրոշմիչ մուրճ) համար | հատ | 3000 | 27000 | 9 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 4 | | | | | 3 | | | |
| 43 | 44511400 | Բոր մեքենայի գլխադիր | Նախատեսված է կտրող գործիքների տեղադրման համար (burs, ֆրեզերային դանակներ, սկավառակների կրիչներ և այլն);Թույլատրելի արագությունը 1800մ/վ,քաշը 123գ | հատ | 11000 | 33000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 2 | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 736490 | | | | | | | | | | | | | |
| | | | | | | Հաստոցների մասեր և պարագաներ | | | | | | | | | | | | | |
| 44 | 42671100 | Նրբասղոցի իրան /ոսկերչական/ | Նրբասղոցի իրան /ոսկերչական/ | հատ | 7500 | 112500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 4 | | 6 | | | | | | 2 | 3 | |
| 45 | 42671180 | Խոզանակ արույրից Փ-22մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,արույրից մանրաթելերով /7մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 22մմ | հատ | 500 | 15000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 15 | | | | | 9 | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | 42671180 | Խոզանակ պողպատից Փ-20մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,պողպատից մանրաթելերով /6մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 20մմ | հատ | 700 | 14000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 10 | | | | | 7 | | |
| 47 | 42671180 | Խոզանակ մազե Փ-26մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,մազե սպիտակ փափուկ մանրաթելերով /7մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 26մմ | հատ | 500 | 15000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 15 | | | | | 9 | | | |
| 48 | 42671180 | Խոզանակ /խիտ/ Փ-60մմ | Պլաստմասսայից սկավառակի վրա ամրացված՝ կլոր,մազե փափուկ մանրաթելերով/ 12մմ երկարությամբ, 4շարք/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 60մմ | հատ | 2500 | 25000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 4 | | | | | | | 4 | |
| 49 | 42671180 | Ծաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշկ/ Փ-24մմ | Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /բամբակյա փափուկ/Փ-24մմ ամրացված մետաղական հիմքի /Փ-10մմ/ վրա | հատ | 500 | 15000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | 5 | | 10 | | | | | | 9 | |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | 42671180 | Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշկի/ Փ-25մմ | Ամրացված մետաղական հիմքի վրա: Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 25մմ | հատ | 500 | 15000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | 15 | | | | 9 | | |
| 51 | 42671180 | Թաղիքե սկավառակ փայլեցման սարքի /պուշկի/ Փ-80մմ | Ամրացված մետաղական հիմքի վրա: Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 80մմ | հատ | 500 | 15000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | 12 | | | | 7 | | 6 |
| 52 | 42671180 | Ալմաքե սկավառակ Փ-20մմ | Գալվանական մեթոդով ալմազապատված իրանի հաստությունը 0,2մմ ծածկույթով մասի հաստությունը՝ 0,5մմ ալմազային փոշու չափը՝ 125/100մկմ սկավառակի աշխատանքային մասի տրամագիծը՝ 12-20մմ միակողմ, երկկողմ կամ եռակողմ հղկման հնարավորություններով | հատ | 3000 | 30000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 4 | | | | | 2 | 2 |
| 53 | 42671180 | Ռետինե սկավառակ 22մմ | Հղկող սկավառակ կաուչուկից հիմքով, հղկող մասնիկների առկայությամբ: հղկող փոշու մասնիկների տրամագիծը՝ 250-400 մկմ | հատ | 200 | 6000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 15 | | | | 12 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54 | 42671100 | Բոր մեքենայի ճկուն թև /Рукав гибкий/ UNIVERSAL | Հարմար է աշխատանքի համար, որը պահանջում է հաճախակի գործիքային փոփոխություններ. Երկարությունը 1մ պտտման արագությունը՝ 18000 պտ/րոպե, պտտման ուղղությունը՝ աջ, քաշը 460գ: | հատ | 10000 | 30000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 1 | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 292500 | | | | | | | | | | | | | |
| Նավթային վազելին, մոմ և հատուկ բենզին | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 55 | 09221200 | Մոմ մոդելային /48*10*10/ | Նավթամթերք, հագեցած ածխաջրածինների խառնուրդ է: Բաղկացած է հիմնականում 9—40 ատոմ ածխածին պարունակող նորմալ ածխաջրածիններից: Քիմիապես պասսիվ է: Փափկեցման ջերմաստիճանը՝ T=104 °C Ճկուն է հնարավոր է ծալել մինչև 90° անկյունով, հեշտությամբ կտրվում է դանակով: | հատ | 300 | 900 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 2 | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 900 | | | | | | | | | | | | | |
| Ոսկերչական արտադրանք, ժամացույցներ և հարակից արտադրանք | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 56 | 18510000 | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-4մմ | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-4մմ | հատ | 200 | 4600 | 23 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 23 | | | | | | | | | | |
| 57 | 18510000 | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-3մմ | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-3մմ | հատ | 150 | 1950 | 13 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 13 | | | | | | | | | | |
| 58 | 18510000 | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-2,5մմ | Քար աճեցրած /Խոնաքար/ Փ-2,5մմ | հատ | 120 | 720 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | | | | | | | | | |
| 59 | 18510000 | Քար աճեցրած /Խոնաքար/ օվալ 5*7 | Քար աճեցրած /Խոնաքար/ օվալ 5*7 | հատ | 500 | 6500 | 13 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 13 | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 60 | 18510000 | Քար աճեցրած /Խոնաքար/ օվալ 8*6 | Քար աճեցրած /Խոնաքար/ օվալ 8*6 | հատ | 800 | 4800 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 6 | | | | | | | | | | |
| 61 | 18510000 | Քար արհեստական գունավոր Փ-4-5մմ | Քար արհեստական գունավոր Փ-4-5մմ | հատ | 300 | 3000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | | | | | | | | |
| 62 | 18510000 | Քար արհեստական դեղին Փ-7մմ | Քար արհեստական դեղին Փ-7մմ | հատ | 500 | 500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 63 | 18510000 | Քար արհեստական կարմիր եռանկյուն, 5մմ կողմով | Քար արհեստական կարմիր եռանկյուն, 5մմ կողմով | հատ | 800 | 3200 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 4 | | | | | | | | | | |
| 64 | 18510000 | Քար բնական /Ագաթ/ 25X15 | Քար բնական /Ագաթ/ 25X15 | հատ | 3200 | 3200 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 65 | 18510000 | Քար բնական /Ագաթ/ 17X12 | Քար բնական /Ագաթ/ 17X12 | հատ | 2800 | 2800 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 66 | 18510000 | Քար բնական /Ագաթ/ 16,5X12,5 | Քար բնական /Ագաթ/ 16,5X12,5 | հատ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 67 | 18510000 | Քար բնական /Ագաթ/ 21X14 | Քար բնական /Ագաթ/ 21X14 | հատ | 3000 | 3000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 68 | 18510000 | Քար բնական /օբսիդիան/ 22X13 | Քար բնական /օբսիդիան/ 22X13 | հատ | 3000 | 3000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| 69 | 18510000 | Քար ցիրկոնե 7մմ | Քար ցիրկոնե 7մմ | հատ | 300 | 300 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 40070 | | | | | | | | | | | | | |
| **Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, պեմզա, կորունդ, բնական հղկաքար, այլ հանքանյութեր և թանկարժեք մետաղներ** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 70 | 14521200 | Արծաթ /Ag/ | Նախատեսված է զոդանյութ և զարդեր պատրաստելու համար 999,9% : Սպիտակ, փափուկ մետաղ է, խտությունը՝ 10,50 գ/սմ³, հալման ջերմաստիճան 960,5 °C, կարծրությունը՝ 25 կգուժ/մմ² | գրամ | 320 | 128000 | 400 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 50 | | 150 | | | | | 100 | 100 | | |
| | | Ընդամենը | | | | 128000 | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **Մետաղյա հանքաքարեր և համաձուլվածքներ** | | | | | | | | | | | | | | | |
